ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

10.11.2025

Սիրելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետությունում այսօր նշվող Տեղական ինքնակառավարման օրվա առիթով:
Զարգացող, կայուն ու քաղաքացիների համար բարեկեցիկ միջավայր ապահովող համայնքները մեր երկրի առաջընթացի գրավականներից են:
Համայնքային մակարդակում են ծնվում շատ կարևոր նախաձեռնություններ, սահմանվում լուծում պահանջող խնդիրների առաջնահերթությունները, բարձրաձայնվում քաղաքացիների կենսական խնդիրների մասին:
Մեր համայնքների ղեկավարներին, ավագանու անդամներին ու ՏԻՄ համակարգի աշխատակիցներին մասնագիտական տոնի կապակցությամբ արգասաբեր գործունեություն, խաղաղ արարելու հնարավորություն և քաղաքացիների անկեղծ գնահատանքն եմ մաղթում:
Օրվա առիթով շնորհավորում եմ ու շնորհակալություն հայտնում նաև Սյունիքի մարզպետի աշխատակազմի այն մասնագետներին, որոնց ամենօրյա աշխատանքը կապված է հենց համայնքների հետ, որոնք սերտ համագործակցում են ու մասնագիտական ներդրում ունեն ՏԻՄ ոլորտի բնականոն գործունեության ապահովման մեջ:
Համոզված եմ, որ համատեղ ջանքերով՝ տարածքային կառավարման մարմնի ու ՏԻՄ համակարգի ներկայացուցիչներս կշարունակենք ամրապնդել մեր մարզը, նրա տնտեսական, սոցիալական, մշակութային ներուժը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ սյունեցիների կյանքի ու աշխատանքի համար:
Բոլորիդ խաղաղություն և առողջություն եմ ցանկանում՝ ի շահ մեր քաղաքացու, ի շահ յուրաքանչյուր համայնքի ու մեր պետության բարօրության: